

հասաւ իրեն իր բարեկամներէն, թէ Թահմազդուլի խան, Ամիրգունէի որդին եւ յաջորդը պատրաստ է օգնելու իրեն, եթէ Երեւան ուղէ դալ:

Սահակ փութաց Երեւան. բայց փոխանակ Խանէն օգնութիւն գտնելու, դրուեցաւ իր առջեւ պարտքերու ցուցակ մը: Կը մօտենար 1628 տարւոյն ծնունդը: Հասկցուց Սահակ իւր պարտապահանջներուն, թէ տօնին հանդէսը Մովսէս եպիսկոպոս պիտի կատարէ եւ յանձնուած է իրեն որ էջմիրածին երթայ եւ կարեւոր սպասները բերէ: Այս պատրուակով հեծաւ արագընթաց ձի մը, մեկնեցաւ առանձին էջմիրածին: Կէս ճանապարհին ծպտած «ի կերպ զօրականի» ուղղուեցաւ դէպի Նախիջևան եւ անկէ անցաւ Վան (1627 Դեկտ.):

Շահին ղուլերը երբ լսեցին թէ Սահակ փախած է՝ դիմեցին Մովսէս եպիսկոպոսի վրայ, որպէս թէ անիկա թելադրած ըլլայ կաթողիկոսին փախուստը: Բայց կըրցաւ Մովսէս արդարացնել ինքզինքը. «յամենայն կողմանց վհատեալք դարձան եւ զնացին ի տեղիս իւրեանց ղուլերն ամենեքեան» (Դաւր. 235—237):

Այսպէս 1628 տարին անցուց էջմիրածինը առանց կաթողիկոսի. բաց էր ասպարէզը Մովսիսի առջեւ: